



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia  
հեռ.՝ (+374-60) 71-01-31, ներքին՝ 11-31, էլ. փոստ՝ [board@ysu.am](mailto:board@ysu.am), [www.ysu.am](http://www.ysu.am)

№ 009 25 հունվարի 2019թ.

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**  
**«Երևանի պետական համալսարան»**  
**հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝**  
**2019 թ. հունվարի 22-ին տեղի ունեցած թիվ 9 նիստի**

ք. Երևան

Նիստին ներկա էին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհրդ) 32 անդամներից 31-ը (կից ներկայացվում է Խորհրդի անդամների գրանցման ստորագրացուցակը):

Օրակարգային առաջին հարցի ժամանակ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 3.8 կետի համաձայն՝ նիստը նախագահում էր Խորհրդի տարիքով ավագ անդամը՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ Ռ. Հարությունյանը, իսկ քարտուղարում ամենաերիտասարդ անդամը՝ ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողուհի Ռ. Խաչատրյանը: Օրակարգային առաջին հարցի քննարկումից հետո նիստը նախագահեց Խորհրդի նորընտիր նախագահ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Գ. Մուրադյանը:

Ռ. Հարությունյանը, բացելով Խորհրդի անդրանիկ նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրություն:
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղարի ընտրություն:
3. 2017-2018 ուստարում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ ռեկտորի հաշվետվության ներկայացում և 2016-2020 թթ. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի զարգացման ռազմավարական ծրագրով

2017-2018 ուստարում նախատեսված աշխատանքների կատարողականի հաստատում:

4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2018 թ. (հունվար-նոյեմբեր ամիսներ) եկամուտների և ծախսերի կատարողականի մասին հաղորդում:
5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2019 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում:
6. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2019 թ. կառուցվածքի հաստատում:
7. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2019 թ. հաստիքացուցակի հաստատում:
8. Ընթացիկ հարցեր.
  - «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2018 թ. ֆինանսատնտեսական գործունեության և ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող անձի ընտրություն:
  - «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի անհատույց օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքի՝ մեկ տարի ժամկետով վարձակալության տրամադրման մրցույթի կազմակերպման կարգի քննարկում:

Խորհրդի անդամների կողմից օրակարգային այլ հարց չառաջարկվեց, և օրակարգը դրվեց քվեարկության. կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրություն:** Ռ. Հարությունյանը խնդրեց առաջադրել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմնի՝ հոգաբարձուների խորհրդի նախագահի թեկնածություններ: Խորհրդի անդամներից ելույթ ունեցավ ԱԺ պատգամավոր Հ. Հովհաննիսյանը, որն առաջադրեց Գ. Մուրադյանի թեկնածությունը՝ նշելով, որ շեշտը դնում ենք պրոֆեսիոնալիզմի վրա և նրա առաջադրումը վկայում է այն մասին, որ վերջինիս գիտական և կազմակերպչական փորձը մեծ նպաստ կբերի համալսարանին՝ բարեփոխումների ճանապարհով անցնելու համար: Այլ առաջարկներ չեղան, և առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

### **Որոշվեց.**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 34-րդ կետով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.3-րդ կետով՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ ընտրել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Գևորգ Ատոմի Մուրադյանին:

**2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղարի ընտրություն:** Խորհրդի նախագահ Գ. Մուրադյանն առաջարկեց «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղարի ընտրության համար առաջադրել թեկնածություններ: ԵՊՀ ՌԻԽ նախագահ Դ. Ափոյանը Խորհրդի քարտուղարի պաշտոնում առաջադրեց ԵՊՀ ասպիրանտ Ա. Սողոմոնյանի թեկնածությունը: Ա. Սողոմոնյանն իր ելույթում ասաց, որ ավարտել է ԵՊՀ

ռմանագերմանական բանասիրության ֆակուլտետը, այժմ աշխատում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում՝ որպես դասախոս:

Հ. Հովհաննիսյանն առաջադրեց ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանի արտաքին կապերի գծով տեղակալ Ա. Իսրայելյանի թեկնածությունը՝ փաստելով, որ նրա անցած ճանապարհը և գործունեությունը նշանակալի են և հատկապես մեծ է նրա ներդրումը հայ-չինական հարաբերությունների զարգացման գործում, որը ստեղծել և ղեկավարում է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի չինարեն լեզվի և մշակույթի կենտրոնը: Ա. Իսրայելյանը, իր ելույթում ներկայացնելով անցած ճանապարհը և գործունեությունը, ասաց, որ պատրաստ է իր ուժերի ներածին չափով նպաստել համալսարանի զարգացմանը:

Առաջարկված թեկնածուների վերաբերյալ Խորհրդի անդամներից ելույթներ ունեցան ԵՊՀ ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր Գ. Հաջյանը և ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահ Ս. Գոգյանը: Ա. Սողոմոնյանի և Ա. Իսրայելյանի թեկնածությունները դրվեցին քվեարկության. Ա. Սողոմոնյան կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: Ա. Իսրայելյան կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

### Որոշվեց.

1. Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.3-րդ կետով՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի քարտուղար ընտրել ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի չինարեն լեզվի և չինական մշակույթի կենտրոնի ղեկավար, դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Արթուր Հրաչիկի Իսրայելյանին:

**3. 2017-2018 ուստարում ԵՊՀ գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ ԵՊՀ ռեկտորի հաշվետվության ներկայացում և 2016-2020 թթ. ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով 2017-2018 ուստարում նախատեսված աշխատանքների կատարողականի հաստատում:** Խորհրդի նախագահ Գ. Մուրադյանը 2017-2018 ուսումնական տարում ԵՊՀ գործունեության վերաբերյալ հաշվետվության ներկայացման համար խոսքը տրամադրեց ԵՊՀ ռեկտոր Ա. Միմոնյանին:

Ա. Միմոնյանը նախքան ելույթը սկսելը շնորհավորեց ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նորընտիր նախագահին, քարտուղարին և խորհրդի բոլոր անդամներին՝ հույս հայտնելով, որ նրանք մեծ նպաստ կբերեն համալսարանի զարգացմանը:

Ռեկտոր Միմոնյանը ներկայացրեց ԵՊՀ ձեռքբերումներն ու բացթողումներն ուսումնական գործընթացի, գիտահետազոտական աշխատանքների, միջազգային համագործակցության, հրատարակչական գործունեության, հանրային կապերի, տեղեկատվական համակարգերի, սոցիալական քաղաքականության, ուսանողների և շրջանավարտների հետ տարվող աշխատանքների ոլորտներում:

Ա. Միմոնյանն անդրադարձավ ԵՊՀ կրթական, գիտահետազոտական, միջազգային համագործակցության, ուսանողական, սոցիալական և այլ ոլորտներում իրականացված աշխատանքներին՝ հակիրճ ներկայացնելով տվյալներ 2017-2018 ուստարում իրագործված ծրագրերի և գրանցված արդյունքների վերաբերյալ: 2017-2018

ուսումնական տարում համալսարանի գործունեությունը բոլոր բնագավառներում իրականացվել է ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրին համապատասխան: Ըստ ժամանակացույց-պլանի՝ ռազմավարական ծրագրով նախատեսված բոլոր 9 նպատակների իրագործմանը միտված խնդիրների ուղղությամբ կատարվել են որոշակի աշխատանքներ:

Ա. Միմոնյանը նշեց, որ հետևողական աշխատանքներ են տարվել բակալավրի կրթական ծրագրերը որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) համապատասխան վերամշակելու ուղղությամբ: Գործընթացը կազմակերպվել և իրականացվել է համաձայն «ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրերի վերամշակման վերաբերյալ» ԵՊՀ ռեկտորի հրամանի և հաստատված ժամանակացույցի: ԵՊՀ գիտական խորհուրդը հաստատել է առկա ուսուցման 53 բակալավրի կրթական ծրագիր: Եվս 17 կրթական ծրագիր հաստատվել է հեռակա ուսուցման համար:

Հաշվետու ժամանակաշրջանում ավարտվել և ամփոփվել են «Երևանի պետական համալսարանում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգի» մշակման ուղղությամբ նախորդ ուստարում ձեռնարկված աշխատանքները և եռամյա ժամկետում (2016-2018 թթ.) իրականացվել է ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված՝ կրթական գործընթացը կարգավորող բոլոր կարգերի վերանայումը, ինչպես նաև մագիստրոսի և բակալավրի բոլոր կրթական ծրագրերի վերամշակումը:

Ա. Միմոնյանը նշեց, որ լրամշակվել են առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների համար նախատեսված «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» տեղեկատվական ձեռնարկները, որոնք տեղադրվել են ԵՊՀ կայքէջում: Դասավանդման և ուսումնառության գործընթացների շարունակական բարելավման նպատակով նախորդ ուսումնական տարում մշակվել և Եվրահանձնաժողովին էր ներկայացվել «Փոփոխություն լսարանում. Նորարարական դասավանդման և ուսումնառության օժանդակում՝ Արևելյան գործընկերության երկրներում ուսանողի ուսումնական փորձառության բարելավման նպատակով» (PRINTeL) նախագիծը, որն արդեն իսկ հաստատվել է և ստացել համապատասխան ֆինանսավորում: «ERASMUS+ PRINTeL» նախագիծը մեկնարկել է 2018 թ. հունվարից:

Ռեկտորը հավելեց նաև, որ ԵՊՀ-ում նույնպես ստեղծվել է աշխատանքային խումբ, որը մշակում է դասախոսների որակավորման բարձրացման բաժնի վերակառուցման գործառնական (օպերացիոնալ) պլանը և այս գործընթացում կարևորվում է նաև արտաքին շահակիցների՝ մասնավորապես գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացումը: Այս տեսակետից երկարամյա և կայուն համագործակցություն է ծավալվում ԵՊՀ-ի և «Մինոփ-սիս-Արմենիա» կազմակերպության միջև: Փոխշահավետ համագործակցության շրջանակում իրականացվող կրթական գործընթացներում ընդգրկվել են ԵՊՀ բակալավրիատի, մագիստրատուրայի, ինչպես նաև ասպիրանտուրայի մի քանի տասնյակ սովորողներ: Ծրագրի շրջանավարտները հիմնականում աշխատանքի են անցնում հենց այդ կազմակերպությունում:

Ա. Միմոնյանն իր զեկույցում անդրադարձավ արդյունավետ համագործակցությանը ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի և ՀՀ մի շարք կազմակերպությունների միջև, որոնցից են «Լիքվոր», «Արփիմեդ» և «Ֆարմատեկ»

դեղագործական ընկերությունները, «Ալֆա-ֆարմ» և «Նատալի-ֆարմ» դեղատների ցանցը, «Աստղիկ» բժշկական կենտրոնը, «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնը», ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնը, ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտը և այլն: Աշխատանքներ են տարվել էլեկտրոնային կառավարման «SuperVision YSU» համակարգի և ԵՊՀ-ում գործող ուսանողական էլեկտրոնային փոստերի միջոցով ուսանողների ուսումնառությանը վերաբերող անհատական տեղեկատվությունները նրանց ավտոմատ փոխանցելու ուղղությամբ:

Խոսելով բուհի վճարովի համակարգում սովորող ուսանողներին մասին՝ Ա. Միմոնյանը նշեց, որ ուստարվա 1-ին կիսամյակում ուսման վարձի գեղչ հատկացվել է 2222 ուսանողի, 2-րդ կիսամյակում՝ 2568-ի: Երկու կիսամյակներում կիրառված գեղչերի գումարը կազմում է ավելի քան 429 միլիոն ՀՀ դրամ: Ուսումնական պրակտիկայի արդյունավետ իրականացման համար ավելի քան 100 պայմանագիր է կնքվել պետական և ոչ պետական տարբեր կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների և նրանց ստորաբաժանումների հետ:

Ա. Միմոնյանը անդրադարձավ ՀՀ դպրոցներում 2017/2018 ուստարվա շրջանավարտների թվի կտրուկ նվազմանը ու մրցակցային միջավայրի ուժեղացող ազդեցությանը և հավաստիացրեց, որ հետևողական աշխատանք է տարվել դպրոցների ավարտական դասարանների աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը նպաստելու, իրազեկության մակարդակը բարձրացնելու և դեպի ԵՊՀ ուղղորդելու ուղղությամբ: Սակայն դիմորդների կայուն հոսքը ապահովելու համար գերակա խնդիրներ են մնում ԵՊՀ կազմում ավագ դպրոցի և քոլեջի բացակայությունը, Հայաստանում Ամերիկյան, Հայ-ռուսական (Սլավոնական), Ֆրանսիական համալսարանների և Մոսկվայի պետական համալսարանի երևանյան մասնաճյուղի հետ բակավարիատի ընդունելության մրցակցային անհավասար պայմանները:

Ա. Միմոնյանը նշեց, որ հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ-ն հանրապետության դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար 10-րդ տարին անընդմեջ կազմակերպել և անցկացրել է օլիմպիադա՝ հանրակրթական տարբեր առարկաների գծով: Արդեն երրորդ տարին է, ինչ օլիմպիադան անցկացվել է 2 փուլով՝ ԵՊՀ-ում և ՀՀ բոլոր մարզերում: Մասնակիցների թիվը 1-ին փուլում 2186 էր, 2-րդ փուլում՝ 402: Համաձայն ԵՊՀ գիտխորհրդի որոշման՝ 2018 թ. օլիմպիադայի 2-րդ փուլում հաղթած և 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի դիպլոմների արժանացած 87 աշակերտներից 19-ը, որոնք ընդունվել են ԵՊՀ վճարովի համակարգ, առաջին կուրսում կստանան համապատասխանաբար 50, 40 և 30% ուսման վարձի գեղչ: Ելնելով «ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի» պահանջից՝ ԵՊՀ 15 պայմանագրային դպրոցների 10-11-րդ դասարանների 44 աշակերտի համար «Հայոց լեզու և գրականություն» և «Պատմություն» առարկաներից 2018 թ. հուլիսին Ծաղկաձորի «Համալսարանական» բազայում կազմակերպվել է ամառային դպրոց:

Ա. Միմոնյանը շարունակեց ելույթը՝ ներկայացնելով հիմնական դասախոսական կազմը, ըստ որի՝ 2017/2018 ուսումնական տարում հիմնական դասախոսական կազմում եղել է 1192 դասախոս, որից պրոֆեսոր՝ 178 (14,8%), դոցենտ՝ 496 (41,5%), ասիստենտ և դասախոս՝ 518 (43,2%): Այդ կազմից 849 հոգին (71,2%) ունի գիտական աստիճան: Կատարված աշխատանքներում անմասն չէր լրացուցիչ կրթությունը, որն իրականացնում է երկրորդ փուլը, որին մասնակցել է մասնակցել է 305 ունկնդիր:

Ռեկտոր Ա. Միմոնյանը, խոսելով տեղեկատվական արդի տեխնոլոգիաների մշակման, ներդրման և գործարկման մասին, նշեց, որ 2017/2018 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանում շարունակել է աշխատանքներն այդ ուղղությամբ: Այս առումով իրականացվել են ծավալուն գործունեություն կրթական նոր տեխնոլոգիաների օգտագործման և մշակման, ՏՏ բնագավառում մագիստրոսական կրթական ծրագրերի և առանձին դասընթացների, գիտահետազոտական աշխատանքների կատարման, համալսարանական կրթության կառավարման և որակի ապահովման, տեղեկատվական համակարգերի մշակման և ներդրման ուղղություններով: Կարելի է նշել Իսրայելի Բար-Իլլան համալսարանը, Հոլոնի տեխնոլոգիական ինստիտուտը և ԱՄՆ Սան Խոսեի պետական համալսարանը, որոնց հետ ստորագրվել են հուշագիր՝ ՏՏ ասպարեզում համատեղ մագիստրոսական ծրագրեր իրականացնելու համար՝ մասնավորապես մեծ ծավալի տվյալների վերլուծության ուղղությամբ: Մեկնարկել են աշխատանքները «Հետազոտության պլանավորում և մեթոդներ» համընդհանուր համալսարանական ինտերակտիվ դասընթացի իրականացման ուղղությամբ: Հաշվետու ժամանակահատվածում ՏՏ կրթական և հետազոտական կենտրոնում կազմակերպվել և իրականացվել է ԵՊՀ 60 դասախոսի վերապատրաստում ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և առցանց դասընթացների մատուցման համար:

Ռեկտոր Ա. Միմոնյանը նշեց, որ հաշվետու ժամանակաշրջանում ևս վարկանշավորման բոլոր աղյուսակներում ԵՊՀ-ն իր ցուցանիշներով շարունակել է գլխավորել հանրապետության բուհերի ցանկը:

2017/2018 ուստարում ԵՊՀ կրթական գործունեության ընդհանուր ասպարեզում արձանագրվել են որոշակի ձեռքբերումներ նախատեսված գործընթացների մեծամասնության հաջող իրականացման շնորհիվ: Այդուհանդերձ, առկա են նաև մի շարք բացթողումներ ու թերացումներ, որոնցից Ա. Միմոնյանը նշեց, որ դասավանդման նորարարական և տեխնոլոգիապես հզորացված մեթոդների ներդրումը համալսարանի պրակտիկայում դեռևս մնում է կարևորագույն խնդիրներից մեկը: ԵՊՀ դասախոսական կազմի վերապատրաստման (որակավորման բարձրացման) խնդիրը համալսարանի կարևորագույն մարտահրավերներից է և պահանջում է համապատասխան ռեսուրսների ու խրախուսման մեխանիզմների ներդրում: Օրակարգային խնդիր է մնում ուսանողներին մատուցվող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների արդյունավետության գնահատման համակարգի ներդրումը:

Ա. Միմոնյանը հանգամանորեն անդրադարձ կատարեց 2017/2018 ուստարում ԵՊՀ-ում իրականացված գիտական գործունեության արդյունքներին ու ձեռքբերումներին, որոնք ներկայացված են 1456 հոդվածներում և 58 մենագրություններում: Համալսարանականների կողմից ավելի քան 236 թեզիս է ներկայացվել տեղական և միջազգային գիտաժողովներին: Իր աշխատանքն է շարունակել ԵՊՀ-ում նախորդ ուստարվանից գործող Ֆիզիկատեխնիկական հետազոտությունների կենտրոնը՝ համապատասխան 3 լաբորատորիաներով, որոնց նպատակն է հնարավորություն տալ ուսանողների ինքնուրույն հետազոտական աշխատանքներ կատարել: Հաշվետու ուստարվանից բարեհաջող գործարկվել է նաև Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ ստեղծված Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնը: ԵՊՀ-ում 2017/2018 ուսումնական տարում ամփոփվել է 48 թեմատիկ դրամաշնորհային ծրագիր, շարունակվել են 1 նպատակային, 9 ասպիրանտների և երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների

աջակցություն, 5 հայ-բելառուսական, 11 հայ-ռուսական դրամաշնորհային ծրագրեր, որոնցից 10-ը բարեհաջող ավարտվել են: Նշված ծրագրերին 2018 թվականից ավելացել է նաև 10 հայ-ռուսական դրամաշնորհային ծրագիր: Ընդհանուր առմամբ, վերջին 3 տարվա կտրվածքով, ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի կողմից հայտարարված դրամաշնորհային ծրագրերի մրցութային շեմը հաղթահարած ծրագրերի մոտ 30%-ը բաժին է ընկնում Երևանի պետական համալսարանին, իսկ բուհերի կողմից մրցութային շեմը հաղթահարած ծրագրերում այդ մասնաբաժինը կազմում է ավելի քան 50%: Մշակվել է ԵՊՀ միասնական հաշվետվողական համակարգի՝ գիտությանն առնչվող հատվածը, որը գործում է [www.intranet.yసు.am](http://www.intranet.yసు.am) հաշվետվողականության ընդհանուր համակարգում: Համակարգը միտված է դյուրացնելու բոլոր այն գործընթացները, որոնք առնչվում են ԵՊՀ աշխատողի գիտակրթական գործունեության հաշվետվությանը, և արդյունավետ համակարգելու այդ հաշվետվության վրա հիմնված այլ գործառնություններ:

Ռեկտոր Ա. Միմոնյանը խոսեց վճարվող լրավճարների մասին, ըստ որի՝ 2017 թ. դեկտեմբեր ամսվա ընթացքում առաջին անգամ, համաձայն լրավճարների մասին կարգի, Ինտրանետ համակարգում մուտքագրված աշխատությունների հիման վրա ԵՊՀ աշխատողներին հատկացվել են լրավճարներ: Մասնավորապես՝ միջազգային հեղինակավոր գիտական պարբերականներում հոդված հրատարակելու համար ԵՊՀ շուրջ 220 աշխատողի հատկացվել է մոտ 21 միլիոն ՀՀ դրամ, կարգին համապատասխան մենագրություն հրատարակելու համար՝ 50 աշխատողի՝ մոտ 7.5 միլիոն ՀՀ դրամ, գիտական աստիճան/կոչում ստանալու համար՝ 52 աշխատողի՝ 7.2 միլիոն ՀՀ դրամ: Առհասարակ գիտահետազոտական գործունեության համար ԵՊՀ ավելի քան 700 աշխատողի հատկացվել է շուրջ 65 միլիոն ՀՀ դրամ: Լրավճարից անմասն չեն մնացել այն դասախոսները (բացառությամբ ժամավճարային հիմունքներով աշխատողների), որոնք ընդգրկվել են ուսանողների հարցման արդյունքներով անցկացվող մրցութային ցուցակներում: Արդյունքում՝ 157 դասախոս ստացել է լրավճար, որի գումարը կազմել է ավելի քան 17 միլիոն ՀՀ դրամ:

Ա. Միմոնյանն անդրադարձավ նաև միջազգային օլիմպիադաներին, ծրագրերին և մրցութներին ակտիվորեն մասնակցած ուսանողներին, որոնք լուրջ հաջողություններ են գրանցել միջազգային հարթակներում՝ բարձր պահելով ԵՊՀ վարկանիշը: Հաշվետու ժամանակաշրջանում արդյունավետ է եղել ԵՊՀ հրատարակչական գործունեությունը. հրատարակվել է գիտակրթական լայն ընդգրկում ունեցող 77 անուն գիրք և 50 համար պարբերական:

ԵՊՀ գիտահետազոտական գործունեության մասին խոսելիս Ա. Միմոնյանը նշեց, որ ձեռքբերումների և հաջողությունների հետ միասին եղել են որոշակի բացթողումներ: Մասնավորապես՝ բազային, թեմատիկ և ԵՊՀ-ի կողմից հատկացվող ֆինանսների սղության պատճառով շարունակում է ցածր մնալ գիտահետազոտական լաբորատորիաների վերագինման տեմպը: Շարունակում է նվազել գիտական գործունեությամբ զբաղվող գիտաշխատողների մեջ 35-55 տարեկանների թիվը: Կիրառական նշանակություն ունեցող գիտահետազոտական արդյունքները հիմնականում չեն վերածվում ներդրման պատրաստ տեխնոլոգիաների: Գիտահետազոտական ծրագրերի և առհասարակ գիտության ֆինանսավորման էլ ավելի պակասեցումը, մասնավորապես աշխատավարձերի ցածր մակարդակը, վտանգի տակ է դնում համալսարանը հեռանկարային երիտասարդ մասնագետներով համալրելը: Շարունակում է ցածր մնալ գիտական ծրագրերում ասպիրանտների և մագիստրոսների ընդգրկվածությունը: Բարձր է առաջատար և ավագ գիտաշխատողների միջին տարիքը:

Կապված գիտական հետազոտությունների հետ Ա. Միմոնյանն իր ելույթում դիմեց ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամներին, որ նրանք դեմ արտահայտվեն գիտության բազային ֆինանսավորումը մրցութային դարձնելու նախագծին՝ հավելելով, որ նմանօրինակ առաջարկն օրենքի ուժ ստանալու դեպքում ԵՊՀ-ն ամսական կկորցնի 50 միլիոն դրամ, իսկ մեր բազային ֆինանսավորման մեջ ընդգրկված մոտ 400 աշխատողներից առնվազն կեսը կդառնա գործազուրկ, որովհետև դժվար է պատկերացնել, որ ԵՊՀ-ն նախկին տեմպերով կկարողանա այդ մրցութներում հաղթել մյուս մրցակիցներին բազային ֆինանսավորման ոլորտում: Սա շատ ծանր հետևանք կարող է ունենալ մեր գիտության զարգացման համար:

Ա. Միմոնյանը հանգամանորեն խոսեց միջազգային համագործակցության մասին՝ հավելելով, որ Երևանի պետական համալսարանը միջազգային համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի աշխարհի շուրջ 50 երկրների 249 համալսարանների, հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ: Հաշվետու ուսումնական տարում առավել ակտիվ շարունակվել է համագործակցությունը մեկուկես տասնյակ հաստատությունների հետ, որոնք են՝ Էքս Մարսել համալսարանը (Ֆրանսիա), Կա Ֆոսկարի համալսարանը (Վենետիկ, Իտալիա), Բեռլինի Հումբոլդի համալսարանը (Գերմանիա), Բոլոնիայի համալսարանը (Իտալիա), Ռոտերդամի Էրազմուս համալսարանը (Նիդերլանդներ), Կարլի համալսարանը (Չեխիայի Հանրապետություն), Կալիֆորնիայի համալսարանը (Բերքլի, ԱՄՆ), Կոննեկտիկուտի համալսարանը (ԱՄՆ), Սանկտ Պետերբուրգի տնտեսագիտության բարձրագույն դպրոցը (ՌԴ), Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանը (ՌԴ), Ազգերի բարեկամության ռուսական համալսարանը (ՌԴ), Կրակովի Յագելլոնյան համալսարանը (Լեհաստան), Լյովենի կաթոլիկ համալսարանը (Բելգիա), Հալլե-Վիտտենբերգի Մարտին-Լյութեր համալսարանը (Գերմանիա), Պոլ Վալերի-Մոնպելյե 3 համալսարանը (Ֆրանսիա): Հաջողությամբ իրականացվել են կրկնակի դիպլոմով ծրագրեր ԱՊՀ երկրների Յանցային համալսարանի կոնսորցիումի շրջանակում (շարունակվել են ծրագրերը միջազգային հարաբերությունների, իրավագիտության, ռուս բանասիրության, ինֆորմատիկայի, տնտեսագիտության, կառավարման, զբոսաշրջության, ֆարմացիայի բնագավառներում):

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում ստորագրվել է 26 պայմանագիր արտասահմանյան բուհերի հետ, և իրականացվել 616 անձ/գործուղում: ԵՊՀ ֆակուլտետներում սովորել են 422 օտարերկրացի ուսանող, ասպիրանտ և ստաժոր: 2017/2018 ուստարվա ընթացքում «Գալուստ Գյուլբենկյան» հաստատության կողմից հատուցվել են համալսարանի երիտասարդ գիտնականների արտասահմանյան կարճաժամկետ գործուղումների (գիտական կոնֆերանսներ, սեմինարներ, դասընթացներ և այլն) ծախսերը:

Ռեկտորն անդրադարձավ ԵՊՀ 100-ամյակին նվիրված միջոցառումների նախապատրաստական ծրագրերին, որի շրջանակում թվայնացվել են ԵՊՀ-ում պահվող բոլոր կինոժապավենները (1000 րոպե), ինչպես նաև 83 աուդիո ժապավեն, տրվել են դրանց նկարագրությունները: Նկարահանվել է համալսարանի մասին պատմող 5 տեսանյութ/ֆիլմ: Հանրային կապերի և տեղեկատվական համակարգերի աշխատանքների մասին խոսելիս ռեկտոր Ա. Միմոնյանն անդրադարձավ ԵՊՀ հանրային կապերի աշխատանքների և գործունեության արդյունքների տարածման համատեքստում աշխատողների ու ուսանողների պասիվ դերակատարությանը:



Ա. Միմոնյանը խոսեց նաև ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի՝ հատկապես Արցախի Հանրապետությունում իրականացված ծրագրերի մասին, ինչպես նաև ԵՊՀ ուսանողական կազմակերպությունների (Ուսանողական խորհուրդ և Ուսանողական գիտական ընկերություն) կողմից իրականացված ծրագրերի, դասախոսությունների, մարտավարական, ռազմագիտական պարապմունքների, ռազմահայրենասիրական բնույթի միջոցառումների մասին: ՈւՄ-ն իրականացրել է ուսանողների իրավունքների և պարտականությունների իրազեկման դասընթացներ, սեմինարներ և միավորել է համալսարանի ուսանողական կառույցների ջանքերը՝ նպաստելով ուսանողության համար արդյունավետ աշխատանքային մթնոլորտի ձևավորմանը: ՌԻԳԸ միջոցառումներից կարևոր նշանակություն ունի գիտական աշխատանքներ կատարելու հմտությունների ուսուցման ամենամյա ծրագիրը, որի շրջանակում ուսանողները ծանոթանում են գիտական հոդված գրելու, դաշտային հետազոտություն իրականացնելու և մեթոդաբանական տեսական ուսումնասիրություններ կատարելու հմտություններին: ՌԻԳԸ-ն հաշվետու շրջանում հրատարակել է ՀՀ ԿԳՆ ԲՈԿ-ի պահանջներին համապատասխանող ՌԻԳԸ գիտական հոդվածների 2017 թ. ժողովածուն (194 գիտական հոդված):

2017/2018 ուստարում ԵՊՀ արհեստակցական կազմակերպության ֆինանսական միջոցներից համալսարանի 316 աշխատողի հատկացվել է 13.342.000 (տասներեք միլիոն երեք հարյուր քառասուններկու հազար) ՀՀ դրամի օգնություն, համալսարանի աշխատողների՝ ԵՊՀ-ում սովորող 161 երեխայի համար կիրառվել է ուսման վարձի մինչև 80% զեղչ՝ ԵՊՀ ֆինանսական միջոցներից հատկացնելով մոտ 56 միլիոն ՀՀ դրամ, իսկ խրախուսման և օգնության նպատակով 18 աշխատողի հատկացվել է 2.800.000 ՀՀ դրամ: 2016 թ. ապրիլին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տեղի ունեցած ռազմական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքների վիճակը բարելավելու նպատակով զոհված 24 զինծառայողի 56 անչափահաս երեխաներին մինչև նրանց չափահաս դառնալը ԵՊՀ-ն տրամադրում է ամենամյա դրամական օգնություն: Յուրաքանչյուր զոհված զինծառայողի ընտանիքի մեկ անչափահաս երեխային ամսական վճարվող օգնության չափը 40.000 ՀՀ դրամ է, իսկ նույն ընտանիքի յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար՝ 20.000 ՀՀ դրամ:

ԵՊՀ ռեկտորը նշեց, որ 2018 թ. հուլիսին ԵՊՀ բյուջեի խնայողությունների հաշվին բոլոր հիմնական աշխատողներին վճարվել է նրանց աշխատավարձերի 50 տոկոսի չափով դրամական պարգևատրում, իսկ 2018/2019 թվականի ուսումնական տարեսկզբից՝ սեպտեմբերի 1-ից, ԵՊՀ աշխատողների ամսական աշխատավարձի չափը ավելացվել է 15 տոկոսով:

Ռեկտորի հաշվետվության ավարտից հետո նախագահ Գ. Մուրադյանը Խորհրդի անդամներին զեկուցողին հարցեր ուղղելու հնարավորություն տվեց: Խոսքի իրավունք խնդրելուց հետո ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ռ. Կարապետյանը, որն անդրադարձավ ԵՊՀ ռեկտոր Ա. Միմոնյանի չբարձրաձայնած հարցերից երկուսին, այն է՝ ԵՊՀ կազմում ավագ դպրոցի ու քոլեջի բացակայությանը և Հայաստանում Ամերիկյան, Սլավոնական, Ֆրանսիական համալսարանների և Մոսկվայի պետական համալսարանի երևանյան մասնաճյուղի հետ բակալավրիատի ընդունելության անհավասար պայմաններին, հարցրեց, թե որո՞նք են այդ անհավասար պայմանները, ինչին ի պատասխան՝ ԵՊՀ ռեկտորն ասաց, որ ԵՊՀ-ում խիստ սահմանափակ է դրված ընդունելության ժամկետը, այնինչ կան բուհեր, որոնք ընդունելության տարբեր ժամկետներ ունեն:

Այնուհետև ելույթ ունենալու ցանկություն հայտնեց ԱԺ պատգամավոր Հ. Հովհաննիսյանը, որն անդրադարձավ հենակետային ավագ դպրոցների կամ քոլեջների հարցին՝ նշելով, որ հնարավոր է տարբերակներ քննարկել և հետագայում դրանք կցել ԵՊՀ-ին: Բազային ֆինանսավորման հետ կապված՝ Հ. Հովհաննիսյանը փաստեց, որ լավ կլինի ՀՀ վարչապետին ուղղված նամակ կազմել և բարձրաձայնել այդ հարցը, ինչպես նաև ասաց, որ կփորձի այդ հարցը բարձրացնել նաև Ազգային ժողովում և հնարավոր լուծումներ գտնել: Հ. Հովհաննիսյանն անդրադարձավ նաև միջազգային համագործակցությանը՝ նշելով, որ բավականին անելիքներ կան հատկապես «Էրազմուս» ծրագրի և նրանում երիտասարդների ներգրավվածության հետ կապված: Պետք է բազմազանեցնել «Էրազմուս» ծրագրի այդ կազմը և տարբեր ծրագրերում ներգրավել մարդկանց՝ հաշվի առնելով պրոֆեսիոնալիզմի փաստարկը:

ԲՈԿ-ի նախագահ Ս. Գոգյանն էլ անդրադարձավ ԵՊՀ վարկանիշի բարձրացման խնդրին՝ նշելով, որ հրավիրելով ԵՊՀ լավագույն դասախոսներին իրենց մոտ աշխատելու՝ Հայաստանի ամերիկյան համալսարանը ձևավորում է բարձրակարգ վարկանիշ: Պետք է այս ուղղությամբ էլ աշխատանքներ տարվեն: ԵՊՀ ռեկտորը, ի պատասխան այդ հարցի, նշեց, որ իմիջի ստեղծման համար պետք է ունենալ ֆինանսական հնարավորություններ, որոնք ունի հենց Հայաստանի ամերիկյան համալսարանը: Բացի դրանից ՀԱՀ-ը ստանում է բարեգործական գումարներ:

Նախագահ Գ. Մուրադյանն անդրադարձավ պրակտիկայի խնդրին, դրա արդյունավետ կազմակերպմանը, ինչպես նաև «Moodle» ծրագրով վերապատրաստված դասախոսների քանակին՝ ճշտելով, թե ինչ սկզբունքով է ընտրվել դասախոսների քանակը, և թե ինչ սկզբունք է գործելու ապագայում: ԵՊՀ ռեկտորն ասաց, որ վերապատրաստված դասախոսներն ընտրվել են մրցութային կարգով, իսկ ապագայում ոչ մի սահմանափակում չի լինելու:

ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի պրոֆեսոր Գ. Հաջյանը փաստեց, որ ահռելի աշխատանք է իրականացվել, և նշեց, որ ֆինանսական խնդիրները շատ են խանգարում կրթական ծրագրերի բարելավմանը: Դրանցից է, օրինակ, ժամաքանակի կրճատումը, որը բխում է ֆինանսական նեղ պայմաններից: Եթե համալսարանն ունենար տասնապատիկ ավելի միջոցներ, ապա ավելի շատ ժամեր կտրամադրեր: Նա դիմեց դահլիճում նստած պետական այրերին՝ խնդրանքով, որ օգնեն ավելացնել համալսարանի պետական ֆինանսավորումը: Գ. Հաջյանը կոչ արեց ռեկտորի հաշվետվությունը գնահատել բավարար:

Այնուհետև ելույթ ունենալու ցանկություն հայտնեց ԵՊՀ մանկավարժության ամբիոնի վարիչ Ն. Հարությունյանը, որը նշեց, որ գիտակրթական գործունեության մասին ռեկտորի հաշվետվությունն իրատեսական էր, քանի որ դրա ընթացքում ներկայացվեցին ոչ միայն ձեռքբերումները, այլև բացթողումները: Նա փաստեց, որ իրականացվում են բարեփոխումների ծրագրեր, որոնցից է ծրագրում ներառված մանկավարժի որակավորման շնորհման նոր համակարգը, որը համալսարանում գործում է 2017-2018 ուստարվանից: Ուսանողն ինքն է ընտրում, թե ցանկանում է ստանալ միայն իր մասնագիտական որակավորումը, թե ավելացնելով 30 կրեդիտ՝ ստանալ նաև մանկավարժի որակավորում: Խոսելով բուհում հենակետային վարժարանների, քոլեջների կամ ավագ դպրոցների ստեղծման անհրաժեշտության մասին՝ Ն. Հարությունյանը նշեց, որ շարունակական կրթության արդյունավետությունն ապահովելու համար պետք է սերտացնել բուհ-դպրոց համագործակցությունը և կապը: Իսկ դրա իրականացման կարևոր ձևերից մեկը բուհում հենակետային վարժարաններ,

քոլեջներ կամ ավագ դպրոցներ բացելն է: Ելույթի վերջում դիմելով Խորհրդի նորընտիր նախագահ Գ. Մուրադյանին՝ Նազիկ Հարությունյանը հույս հայտնեց, որ ԵՊՀ-ին նույնպես հենակետային վարժարան, քոլեջ կամ ավագ դպրոց ունենալու հնարավորություն կրնձեռվի:

ԵՊՀ ՏՏ կրթական և հետազոտական կենտրոնի ղեկավար Ս. Շուքուրյանն իր ելույթում կարևորեց համալսարանում տարբեր հետազոտությունների մեջ նորարարությունների կիրառությունը, հետազոտական ծրագրերի զարգացումը: Ս. Շուքուրյանը հավելեց, որ Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաները բավարար տեմպով չեն զարգանում, ուստի այդ խնդրին լուծում տալու համար նա առաջարկում է համալսարանում ներմուծել ինտերնատուրայի գաղափարը և համագործակցել բոլոր այն ընկերությունների հետ, որոնք իրականացնում են նորարարական հետազոտություններ:

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ Ռ. Հարությունյանը նույնպես դրական գնահատեց հաշվետվությունը: Անդրադառնալով բազային ֆինանսավորմանը՝ Ռ. Հարությունյանը նշեց, որ հարցը միայն մրցութային և ոչ մրցութային չէ, նույնիսկ եթե մենք հիմա ունենանք տենդերով բազային ֆինանսավորում, այն կտևի 3 ամիս, ինչը նշանակում է, որ մարդիկ աշխատավարձ չեն ստանալու: Եվ առաջարկեց, որ այն անդամները, որոնք կարող են դիմել կառավարությանը, պետք է ամեն ինչ անեն գործընթացն արագացնելու համար: Անդրադառնալով գիտական ոլորտում առկա աշխատողների քանակին՝ վերջինս նշեց, որ այս ոլորտում «ձրիակերներ» շատ քիչ կան: Ռ. Հարությունյանը Կենսաբանության ֆակուլտետի օրինակով հավելեց, որ ֆակուլտետը 74 միլիոն դրամ է ստանում՝ որպես աշխատավարձ, և ըստ անցած տարվա տվյալների՝ 170 միլիոն դրամ՝ դրամաշնորհ, այսինքն՝ երկու անգամ ավելի շատ: Երիտասարդները կազմում են մեր անձնակազմի կեսը, բավականին ակտիվ հրատարակվում են գիտական հոդվածներ: Ռ. Հարությունյանն առանձնահատուկ կարևորեց ԳԱԱ-ի հետ համագործակցությունը և նշեց, որ այն բոլորովին նոր հնարավորություններ կբացի հետագա առաջընթացի համար: Նա խոսեց նաև ներուժի մասին և փաստեց, որ հարցն ավելորդ անգամ պետք չէ ծանրաբեռնել, պարզապես պետք է արդյունավետ համագործակցել կառավարության հետ:

Այլ հարցեր և ելույթներ չհնչեցին, ուստի նախագահ Գ. Մուրադյանն առաջարկեց հաստատել ռեկտորի հաշվետվությունը և ԵՊՀ գործունեությունը 2017-2018 ուստարում գնահատել բավարար: Առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

### **Որոշվեց.**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 3-րդ ենթակետով և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4-րդ կետի 3-րդ ենթակետով, լսելով 2017-2018 ուսումնական տարում ԵՊՀ գործունեության վերաբերյալ ռեկտոր Ա. Սիմոնյանի հաշվետվությունը՝

- 1) Հավանություն տալ 2017-2018 ուսումնական տարվա ընթացքում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:
- 2) Հավանություն տալ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով 2017-2018 ուստարում նախատեսված աշխատանքների վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:

3) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2017-2018 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:

**4. 2018 թ. (հունվար-նոյեմբեր ամիսներ) ԵՊՀ եկամուտների և ծախսերի կատարողականի մասին հաղորդում:** Խորհրդի նախագահ Գ. Մուրադյանը հիշեցրեց, որ, համաձայն «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետի, ԵՊՀ կանոնադրության 22-րդ կետի 2-րդ, 42-րդ կետի 7-րդ ենթակետերի և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 16-րդ ենթակետի, Խորհուրդը պետք է հաստատի ոչ թե 11 ամսվա, այլ ֆինանսական ողջ տարվա հաշվետվությունը, ուստի այն Խորհրդի հաստատմանը կներկայացվի կամ Հոգաբարձուների խորհրդի նիստ գումարելու ձևաչափով, կամ հարցման կարգով:

Ա. Սիմոնյանը ներկայացրեց 2018 թ. ԵՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշվի տասնամեկամսյա կատարողականը, ըստ որի՝ այն պրոֆիցիտային է՝ կազմելով 864 միլիոն ՀՀ դրամ: Եկամուտները նախատեսվածի նկատմամբ արդեն հավաքվել են 93%-ով: Ուսման վարձավճարներից եկամուտների կատարողականը կազմել է 91%: Միջին ուսման վարձի չափը ԵՊՀ-ում 2018 թ., հաշվի առնելով գեղչերը, կազմել է 458 հազար դրամ՝ վճարովի համակարգում սովորող միջին տարեկան 12.690 ուսանողների հաշվարկով: 3210 ուսանողների ԵՊՀ-ի կողմից լրիվ կամ մասնակի գեղչվել է ուսման վարձը: Ուսման վարձի գեղչերի ընդհանուր ծավալը կազմել է 429 միլիոն դրամ, այսինքն՝ մեկ ուսանողի հաշվով՝ 133.750 հազար դրամ: Ա. Սիմոնյանը հաղորդեց, որ պետական ֆինանսավորումն իրականացվում է համաձայն ժամանակացույցի: Մեկ ուսանողի համար պետական նպաստը կազմել է 639.700 դրամ: Պետական ֆինանսավորմամբ ԵՊՀ-ում սովորում են տարեկան միջին թվով 2340 ուսանողներ, որոնցից 149-ը՝ Իջևանի մասնաճյուղում: Գիտական և գիտատեխնիկական ծրագրերով պետական ֆինանսավորումը նախատեսվածի նկատմամբ ստացվել է 78%-ի չափով, այս հատվածում մենք կունենանք թերֆինանսավորում, որը պայմանավորված է թեմատիկ ծրագրերի ուշ հաստատվելու հետ:

Ձեռնարկատիրական այլ եկամուտների գծով 11-ամսյակի դրությամբ նախատեսված ցուցանիշներն արդեն գերակատարվել են լրացուցիչ կրթական ծառայությունների, մարզասրահի վճարովի ծառայությունների, դրամաշնորհային ծրագրերի և բանկից ստացվող տոկոսների մասով: Թերհավաքագրվել են Ծաղկաձորի և ատամնաբուժարանի եկամուտները, վերջինս պայմանավորված է այդ ստորաբաժանման փակման հետ: Չեն հավաքագրվել ուսանողական հանրակացարանի եկամուտները, քանի որ այն դեռ շահագործման չի հանձնվել: Ծախսերը նախատեսվածի նկատմամբ կատարվել են 82%-ով:

Անդրադառնալով աշխատավարձի ծախսերին՝ ռեկտոր Ա. Սիմոնյանը նշեց, որ դրանք կատարվել են 90%-ով: Աշխատողների ամսական միջին թիվը կազմել է 2527 մարդ: Ամսական միջին աշխատավարձը 1 մարդու հաշվարկով 11 ամսվա կտրվածքով կազմել է 196.500 դրամ՝ ներառյալ հարկերը, իսկ նվազագույն ամսական աշխատավարձը՝ 80 հազար դրամ: Հաշվետու տարվա հունիս ամսվա վերջին բոլոր հիմնական աշխատողներին վճարվեց իրենց աշխատավարձի 50%-ի չափով պարգևատրում, իսկ դեկտեմբեր ամսին՝ ամբողջ աշխատավարձի չափով: Ա. Սիմոնյանը հավելեց, որ դրական արդյունքներ են գրանցվել աշխատողների առողջության ապահովագրության ծառայության մասով, և որ արդեն երկրորդ տարին է իրականացվում և նախատեսված է նաև հաջորդ տարվա նախահաշվում: Ամբողջովին

վերանորոգվել է նաև Ծարավ Աղբյուր փողոցի վրա գտնվող ուսանողական հանրակացարանը, որտեղ նախատեսվում է ընդունել ԵՊՀ օտարերկրյա ուսանողներին: Դրամական միջոցների մնացորդը 2018 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմում է 5.4 միլիարդ դրամ, իսկ կառուցվածքային ստորաբաժանումներին հատկացված միջոցների ծախսերի կատարողականը դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմել է 87%:

2018 թ. հունվար-նոյեմբեր ամիսների ԵՊՀ եկամուտների և ծախսերի կատարողականի մասով ռեկտորի հաղորդումն ընդունվեց Խորհրդի կողմից ի գիտություն, սակայն նախագահ Գ. Մուրադյանն առաջարկեց զուգահեռ ներկայացնել նաև 2019 թ. ԵՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշիվը, քանի որ համեմատականության մեջ կարող են առաջանալ հարցեր:

**5. 2019 ֆինանսական տարվա ԵՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում:** Ա. Միմոնյանը, ներկայացնելով 2019 թ. ԵՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշիվը, շեշտեց, որ այն դեֆիցիտային է, որը կազմում է 674 միլիոն դրամ: Նախորդ տարվա համեմատ եկամուտները նվազելու են շուրջ 3%-ով կամ 250 միլիոն դրամով, այն վերաբերում է վճարովի ուսուցման ծառայությանը կապված ուսանողների թվի նվազման հետ: Ծախսերն ավելանում են 3.4%-ով, կամ 324 միլիոն դրամով, որը հիմնականում վերաբերում է աշխատավարձի ծախսերին: Պետք է նշել, որ նախահաշիվը սոցիալական ուղղվածություն ունի, քանի որ ուսման վարձերի գծով եկամուտների նվազման պարագայում 2018 թ. սեպտեմբերի 1-ից բարձրացվել են աշխատավարձերը 15%-ով, իսկ նախորդ 4 տարիների նախահաշիվներն ապահովել են ԵՊՀ-ի ֆինանսական կայունությունը, քանի որ տարեկան կատարողականները եղել են պրոֆիցիտային, ինչի արդյունքում դրամական միջոցների մնացորդը թույլ է տալիս լրացնել հաշվետու տարվա դեֆիցիտը: Ուսման վարձերից նախատեսվող եկամուտները նախորդ տարվա համեմատ նվազել են 450 միլիոն դրամով կամ շուրջ 8%-ով: Այս հոդվածով եկամուտները կազմում են ընդհանուր եկամուտների 59%-ը: Վճարովի համակարգում սովորում է շուրջ 13.200 ուսանող, որոնցից 1200-ը՝ Իջևանի մասնաճյուղում: Պետական ֆինանսավորումը կազմում է ընդհանուր եկամուտների 32%-ը, որի 22%-ը վերաբերում է կրթական գործունեությանը, իսկ 10%-ը՝ գիտական: Պետական ֆինանսավորմամբ սովորում են տարեկան միջին 2550 սովորող, որոնցից 150-ը՝ Իջևանի մասնաճյուղում, իսկ 340-ը՝ հետբուհական կրթությամբ: Մեկ ուսանողի ֆինանսավորումը 2019 թ. կազմելու է 626.000 դրամ: Ռեկտորը նշեց, որ վճարովի համակարգում սովորող 1200 ուսանողների ուսման վարձերը մասնակի կամ 100%-ով ևս ֆինանսավորվում են պետական բյուջեի միջոցներից՝ որպես սոցիալապես անապահով, սահմանամերձ բնակավայրերի, արտոնություն ունեցող ուսանողների: Այս տարվանից սկսվել է «Պատիվ ունեն» ծրագրին մասնակցող ուսանողների ուսման վարձերի փոխհատուցումը, այդ ծրագրին ԵՊՀ-ից մասնակցում է 61 ուսանող, որոնցից 52-ը՝ վճարովի համակարգում սովորող: Գիտական և գիտատեխնիկական ծրագրերով պետական ֆինանսավորումը նախատեսվում է շուրջ 920 միլիոն դրամ, որից 760 միլիոն դրամը՝ որպես դրամաշնորհային ծրագրեր, իսկ 150 միլիոն դրամը՝ գիտաշխատողներին վճարվող հավելավճարներ: Մնացած եկամուտները միասին վերցրած կազմում են ընդհանուրում 9%, որից 4,5%-ը վերաբերում է դրամաշնորհային ծրագրերին, իսկ 2%-ը՝ Արդշինբանկից ստացվող տոկոսներին: Խոսելով ծախսերի մասին՝ Ա. Միմոնյանը նշեց, որ 2019 թ. նախահաշվում աշխատավարձը ընդհանուր ծախսերում կազմում է 68.8%-ը: Նախորդ տարվա համեմատ այս հոդվածով ծախսերը ավելացել են շուրջ 400 միլիոն

դրամով և պայմանավորված է 2018 թ. աշխատավարձերի բարձրացմամբ: Այս հոդվածում 60%-ը վերաբերվում է դասախոսական անձնակազմին, 16%-ը՝ դրամաշնորհային և գիտական ծրագրերում ընդգրկված անձնակազմին, 6%-ը՝ ուսումնաօժանդակ, 16%-ը՝ վարչական, սպասարկող և տեխնիկական անձնակազմին: Ծախսերում հաշվի է առնված նաև տարեվերջյան պարգևատրումը (13-րդ աշխատավարձ): Ռեկտորը հավելեց, 2019 թ. նախահաշվում նախատեսված է նաև աշխատողներին բժշկական ապահովագրության 140 միլիոն դրամ ծախսը: Ծախսերից հանվել է Հայաստանի երիտասարդական հիմնադրամին հատկացվող գումարը: Նախատեսվել են միջոցներ ԵՊՀ ռազմավարական ծրագրով նախատեսված միջոցառումների, ինչպես նաև ԵՊՀ 100-ամյակին վերաբերվող ծրագրերի համար, իսկ ֆակուլտետներին հատկացվող գումարներում փոփոխություններ չեն կատարվել:

Ա. Միմոնյանը ներկայացրեց նաև Իջևանի մասնաճյուղի 2019 թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվը և շեշտեց, որ այն հավասարակշռված է և կազմում է 515 միլիոն դրամ: Եկամուտների շուրջ 92%-ը վերաբերում է բարձրագույն կրթության ծառայություններին, որից 64%-ը վճարովի համակարգում սովորող ուսանողներին, իսկ 28%-ը պետական ֆինանսավորմամբ ուսանողներին: Բանկերից ստացվող տոկոսային եկամուտները կազմում են նախահաշվի 7%-ը, իսկ 1%-ը վերաբերում է տարատեսակ քննությունների կազմակերպման ծառայություններին և բարեգործական եկամուտներին: Իջևանի մասնաճյուղում սովորում է միջինը տարեկան 1350 ուսանող: Նախահաշվային ծախսերի շուրջ 80%-ը վերաբերում է աշխատավարձին: Մասնաճյուղում միջինը տարեկան աշխատում են 220 աշխատող, որոնց միջին ամսական աշխատավարձը կազմում է 154.000 դրամ: Ծախսերի 10%-ը վերաբերում է կրթաթոշակին, հարկերին, կոմունալ և կապի ծախսերին: Մասնաճյուղի ծախսերում նախատեսվում է 15 միլիոն դրամի ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերում և 3 միլիոն դրամի շենքերի վերանորոգում:

Ռեկտորի զեկույցի ավարտից հետո նախագահ Գ. Մուրադյանը Խորհրդի անդամներին զեկուցողին հարցեր ուղղելու հնարավորություն տվեց:

Գ. Մուրադյանը հետաքրքրվեց, օրինակ, հետազոտություն արվո՞ւմ է, թե ինչու է Ծաղկաձորի «Համալսարան» ուսումնաարտադրական բազան, որն ըստ ծանրաբեռնված աշխատանքային գրաֆիկի՝ պետք է շահույթով գործի, բացասական արդյունքով է աշխատում, հարցին ի պատասխան՝ ԵՊՀ ռեկտորը նշեց, որ այն ուսումնաարտադրական բազա է, և այնտեղ անցկացվում են տարաբնույթ միջոցառումներ, ամառային դպրոցներ համալսարանի հաշվին: Այն, ինչ խոսք, կարիք ունի ֆինանսական ներդրման և նոր մենեջմենթի:

Նախագահ Գ. Մուրադյանը առաջարկեց խորհրդի քննարկմանը ներկայացնել Ծաղկաձորի «Համալսարան» ուսումնաարտադրական բազայի տարեկան բաշխվածությունը՝ պլանավորելու համար որպես գործիք շահույթով աշխատելու համար:

Գ. Մուրադյանը հետաքրքրվեց նաև կոմունալ վճարումների վերաբերյալ ներկայացված թվերով՝ ասելով, որ դրանք, տարածքի համեմատ, ավելի շատ են ներկայացված: Այն հարցին, թե արդյոք կա նման վերլուծություն ծախսերի արդյունավետության առումով՝ ռեկտորը պարզաբանեց, որ այս ոլորտում անելիքներ շատ կան հատկապես համալսարանի ուսումնաարտադրական բազաների կոմունալ ծախսերում:

Հոգաբարձուների խորհրդի նախագահի հարցին ի պատասխան, թե ի՞նչ են ենթադրում նպատակային ֆինանսավորման ծախսերը, Ա. Միմոնյանը պատասխանեց, որ դրանք համաֆինանսավորմամբ գիտական ծախսերն են, որոնք արվում են եվրոպական գործընկեր 5 համալսարանների հետ:

Իսկ հարցին, թե ինչպես է լուծվելու դեֆիցիտի խնդիրը, ԵՊՀ ռեկտորն ասաց, որ լրացման աղբյուրը 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ նախորդ տարիների ընթացքում կուտակված ԵՊՀ դրամական միջոցների մնացորդն է: Ռեկտորը հավելեց, որ վատատեսական են ներկայացված 2019 թ. սպասվող ընդունելության տվյալները, և որ լուծումներից մեկն էլ ծախսերի կրճատումն է:

ԱԺ պատգամավոր Հ. Հովհաննիսյանն առաջարկեց 2019 թ. հունվարից Հոգաբարձուների խորհրդում ստեղծել հանձնախումբ, որը կվերլուծի ներկայացվող ֆինանսական հաշվետվությունը, թվերը և ավելի առարկայական կներկայացնի խորհրդի անդամներին:

Այլ հարցեր և առաջարկներ չհնչեցին, ուստի նախահաշիվը դրվեց քվեարկության. կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

### **Որոշվեց.**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 7-րդ ենթակետով և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4-րդ կետի 7-րդ ենթակետով, լսելով ռեկտոր Ա. Միմոնյանի զեկուցումը Երևանի պետական համալսարանի 2019 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի վերաբերյալ՝

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2019 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ռեկտորին 2019 թվականի ծախսերը կատարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2019 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվին համապատասխան:

**6. 2019 թ. ԵՊՀ կառուցվածքի հաստատում:** Օրակարգի 6-րդ հարցը ներկայացնելիս ԵՊՀ ռեկտոր Ա. Միմոնյանը հիշեցրեց, որ ԵՊՀ հիմնական կառուցվածքը մնացել է նույնը, գործում են 19 ֆակուլտետներ, համահամալսարանական և ֆակուլտետային ենթակայության 2-ական ինստիտուտներ, 1 մասնաճյուղ և կառուցվածքային այլ ստորաբաժանումներ: Գիտական խորհուրդը ԵՊՀ կառուցվածքում նոր ստորաբաժանումների ստեղծման, գործող մի քանի ստորաբաժանումների լուծարման և վերակազմակերպման միջնորդություններ է քննարկել և դրանք ներկայացվում է Հոգաբարձուների խորհրդի հաստատմանը:

Առաջարկվում է լուծարել (գործունեությունը դադարեցնել) «Իրավաբանական բաժին», «Կադրերի բաժին» կառուցվածքային ստորաբաժանումները և ստեղծել «Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը՝ «Անձնակազմի կառավարման» և «Իրավական ապահովման» բաժիններով: «Ռումանագերմանական բանասիրության ֆակուլտետ» կառուցվածքային ստորաբաժանումը վերանվանել «Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ» կառուցվածքային ստորաբաժանման: Լուծարել (գործունեությունը դադարեցնել) «Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը և ստեղծել «Հանրային կապերի ծառայություն» կառուցվածքային ստորաբաժանումը: Լուծարել (գործունեությունը

դադարեցնել) Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի «Ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ամբիոն» և «Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումները: Ռադիոֆիզիկայի ֆակուլտետում ստեղծել «Կիրառական էլեկտրադինամիկայի և մոդելավորման ամբիոն» ու «Հեռահաղորդակցության և ազդանշանների մշակման ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումները: «Գերբարձր հաճախությունների ռադիոֆիզիկայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը վերանվանել «Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանման: Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի «Ռեգիոնալ երկրաբանության, պետրոլոգիայի և օգտակար հանածոների ամբիոն» ու «Օգտակար հանածոների որոնման և հետախուզման ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումները միաձուլման ձևով վերակազմակերպել «Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանման: Ստեղծել «Քաղաքականության վերլուծության կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը: Լուծարել (գործունեությունը դադարեցնել) «Մասս մեդիա» գիտակրթական կենտրոն կառուցվածքային ստորաբաժանումը: Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում ստեղծել «Նորարարության տնտեսագիտության ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը: «Փիլիսոփայության պատմության» և «Տեսական փիլիսոփայության, տրամաբանության և հոետորիկայի» ամբիոնների միավորման եղանակով վերակազմակերպել «Փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը: «Սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության» ամբիոնը վերանվանել «Սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության» ամբիոն կառուցվածքային ստորաբաժանման:

Ռեկտորի զեկույցի ավարտից հետո նախագահ Գ. Մուրադյանը Խորհրդի անդամներին զեկուցողին հարցեր ուղղելու հնարավորություն տվեց:

Իսկ հարցին, թե ինչպես հասկանալ «Քաղաքականության վերլուծության կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը, ռեկտոր Սիմոնյանը նշեց, որ դա իրականացնելու է կիրառական քաղաքագիտության ուղղվածությամբ հետազոտություններ:

Նախագահ Գ. Մուրադյանն անդրադարձավ Ձեռնարկատիրության աջակցման կենտրոնի և Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի գործառույթներին ու նպատակահարմարությանը, ռեկտորը պատասխանեց, որ այստեղ պետք է լինեն անհրաժեշտ փոփոխություններ, որոնց մասին պետք է քննարկումներ լինեն:

Այլ հարցեր չհնչեցին, և Խորհրդի նախագահ Գ. Մուրադյանն առաջարկեց քվերակությամբ հաստատել ԵՊՀ կառուցվածքը. կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

### **Որոշվեց.**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5-րդ ենթակետով և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4-րդ կետի 5-րդ ենթակետով՝ հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2019 թվականի կառուցվածքը՝ համաձայն հավելվածի:

**7. 2019 թ. ԵՊՀ հաստիքացուցակի հաստատում:** Խոսելով հաստիքացուցակի մասին՝ Ա. Սիմոնյանը զեկույցեց՝ վերջինս բխում է կառուցվածքային այն փոփոխություններից, որ այսօր ունի ԵՊՀ-ն, բավականին դինամիկ է և շատ հաճախ



փոփոխվում է՝ կապված աշխատողների թվի փոփոխմամբ և կառուցվածքային ստորաբաժանումներում լրացուցիչ գործառույթներ ունենալու անհրաժեշտության հետ: Ուստի խնդրեց Հոգաբարձուների խորհրդին հաստատել այն:

Անձնակազմի արդյունավետությունը բարձրացնելու Գ. Մուրադյանի հարցին ի պատասխան՝ Ա. Միմոնյանը շեշտեց, որ հաստիքային միավորները նախատեսված է նվազեցնել գրեթե բոլոր հաստիքային խմբերում, հատկապես՝ պրոֆեսորադասախոսական, վարչաօժանդակ, ուսումնաօժանդակ, սպասարկող և ինժեներատեխնիկական անձնակազմերում:

Հ. Հովհաննիսյանն առաջարկեց արդյունավետ կառավարման համար հետագայում քննարկել և վերանայել վարչական ապարատի՝ հատկապես ռեկտորի, պրոռեկտորների աշխատավարձերի բարձրացումը:

Խորհրդի քարտուղար Ա. Իսրայելյանն առաջարկեց ԵՊՀ պատմության թանգարանում ժամանակավոր էքսկուրսավար-թարգմանիչի հաստիք ստեղծել՝ ԵՊՀ 100-ամյակի նվիրված միջոցառումների աշխատանքները թանգարանում համակարգելու համար, որին ի պատասխան՝ Ա. Միմոնյանը նշեց, որ այդ հաստիքը միջոցառումների շրջանակում նախատեսված է:

Քանի որ հարցեր և առաջարկություններ չհնչեցին, Խորհրդի նախագահ Գ. Մուրադյանն առաջարկեց հաստատել ԵՊՀ հաստիքացուցակը. կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

## Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 6-րդ ենթակետով և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4-րդ կետի 6-րդ ենթակետով՝ հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2019 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն հավելվածի:

## 6. Ընթացիկ հարցեր

- «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2018 թ. ֆինանսատնտեսական գործունեության և ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող անձի ընտրություն: Հարցի ներկայացման համար Խորհրդի նախագահ Գ. Մուրադյանը խոսք տրամադրեց Ա. Միմոնյանին, ով ասաց, որ այսօր այդ հարցը ժամանակավրեպ է, քանի որ արտաքին աուդիտը ենթարկվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքին: Ռեկտորը տեղեկացրեց, որ Հոգաբարձուների խորհուրդն այստեղ շատ անելիք չունի, որովհետև 2018 թվականի ապրիլից հարցը կարգավորվում է օրենքով:
- «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի անհատույց օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքի՝ մեկ տարի ժամկետով վարձակալության տրամադրման մրցույթի կազմակերպման կարգի քննարկում: Այս հարցի վերաբերյալ Ա. Միմոնյանը պարզաբանեց, որ ՀՀ ԿԳՆ-ից ստացվել է նամակ, որով առաջարկվել է մշակել կարգ և այն ներկայացնել Հոգաբարձուների խորհրդի հաստատմանը: Ռեկտորը հավելեց, որ կարգը մշակվել և հաստատվել է, բայց կլինեն խնդիրներ, որոնք կծագեն «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո: Ա. Միմոնյանը առաջարկեց ժամանակավոր ընդունել կարգը մինչև ԵՊՀ գիտխորհուրդը մանրամասն կքննարկի և լուծումներ կառաջարկի այդ

խնդիրների վերաբերյալ: Խորհրդի նախագահ Գ. Մուրադյանն առաջարկեց նախարարությունից պարզաբանում խնդրել՝ հաջորդ քննարկմանը նախապատրաստվելու համար:

Քանի որ այլ հարցեր և ելույթներ չհնչեցին, նախագահ Գ. Մուրադյանն ամփոփեց Խորհրդի աշխատանքը և նիստը հայտարարեց փակված:

Խորհրդի նախագահ՝

Գ. Մուրադյան

Խորհրդի քարտուղար՝

Ա. Իսրայելյան